Պատմություն և մշակույթ
History and Culture

2024 № 21 (2)

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.220

Monument on The Border: Preservation and Availability

Hamazasp Abrahamyan
https://orcid.org/0009-0004-1403-0929
Institute of Archeology and Ethnography
Museum of History of Armenia
abrahamyanhamazasp@gmail.com

Keywords: border monument, Goris region, conservation, accessibility, cultural landscape, border change.

After the 44-day Artsakh war and subsequent border changes, challenges arose regarding the preservation and accessibility of monuments near the border. To discuss the changes in the cultural landscape and the status of monuments in the border zone, we singled out the Goris region.

In general, monuments can be divided into three main groups, according to their preservation problems and the type of accessibility: monuments that have passed into the territories of Azerbaijani control, monuments located in the neutral zone and/or near the border and without access, monuments close to the border and with access. In the case of these three groups of monuments, the problems of their preservation and accessibility are different. But, taking into account the possibility of border changes and military clashes, all monuments can be targeted or appear in the area of possible new military operations.

Thus, the condition of the monuments that play an important role in completing the cultural landscape of the border settlements has changed after the 2020-2022 Azerbaijani aggression, and this change is expressed in different ways in the case of different monuments. Among these monuments are the Bgheno Noravank, which occupies an important place in the cultural heritage of Armenia, Srnegtsi, the Melic palace of Khnatsakh, many khachkars, monasteries, churches, Melic palaces, rock-hewn complexes, burial grounds, settlements, cemeteries, monuments, etc.

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 220-234.

Received: 20.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 19.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Հուշարձանը սահմանին. պահպանությունը և մատչելիությունը[1]

Համազասպ Աբրահամյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Հայաստանի պատմության թանգարան

Հիմնաբառեր՝ սահմանային հուշարձան, Գորիսի տարածաշրջան, պահպանություն, մատչելիություն, մշակութային լանդշաֆտ, սահմանային փոփոխություն:

Արցախյան 44-օրյա պատերազմից և դրան հաջորդած սահմանային փոփոխություններից հետո խնդիրներ առաջացան նաև ՀՀ սահմանին մոտ գտնվող հուշարձանների պահպանության և մատչելիության հարցում: Սահմանային գոտում մշակութային լանդշաֆտի և հուշարձանների կարգավիճակի փոփոխությունները քննարկելու համար առանձնացրել ենք Գորիսի տարածաշրջանը:

Ընդհանուր առմամբ հուշարձանները, ըստ իրենց պահպանության խնդիրների և մատչելիության տեսակի, կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ ադրբեջանական վերահսկողության տակ անցած տարածքներում գտնվող հուշարձաններ, չեզոք գոտում և/կամ սահմանին մոտ գտնվող և հասանելիություն չունեցող հուշարձաններ, սահմանին մոտ գտնվող և հասանելիություն ունեցող հուշարձաններ: Այս երեք խմբերի հուշարձանների դեպքում տարբեր են դրանց պահպանության և մատչելիության խնդիրները: Բայց հաշվի առնելով սահմանային փոփոխությունների և ռազմական բախումների հավանականությունը՝ բոլոր հուշարձաններն էլ կարող են թիրախավորվել կամ հայտնվել հնարավոր նոր ռազմական գործողությունների հատվածում:

Սահմանային բնակավայրերի մշակութային լանդշաֆտի մեջ կարևոր դեր ունեցող հուշարձանների վիճակը 2020-2022 թթ. ադրբեջանական ագրեսիայից հետո ենթարկվել է փոփոխության, և այդ փոփոխությունը տարբեր հուշարձանների դեպքում արտահայտված է տարբեր կերպ: Այս հուշարձանների շարքում են հայաստանյան մշակութային ժառանգության մեջ կարևոր տեղ զբաղեցնող Սոնեղցին, Բղենո Նորավանքը, Խնածախի մելիքական ապարանքը, բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ, մելիքական ապարանքներ, ժայռափոր համալիրներ, խաչքարեր, կոթողներ, բնակատեղիներ, դամբարանադաշտեր, գերեզմանատներ և այլն:

Памятники на границе: сохранность и доступность

[1] Հոդվածը տպագրվել է «22YR-6A010» ծածկագրով ծրագրի շրջանակում:

Monument on The Border: Preservation and Availability

Հուշարձանը սահմանին. պահպանությունը և մատչելիությունը[1]

Амазасп Абраамян
Институт Археологии и этнографии
Музей Истории Армении

Ключевые слова: приграничный памятник, Горисский район, сохранение, доступность, культурный ландшафт, пограничные изменения.

Вследствие 44-дневной Арцахской войны и последевовавшими за войной пограничными изменениями, появились проблемы сохранения и доступности памятников приграничной зоны с Азербайджаном. Для обсуждения изменений состояния культурного ландшафта и памятников в приграничной зоне нами был выбран Горисский район области Сюник.

В общей сложности, памятники приграничной зоны по проблемам сохранности и степени доступности, можно разделить на три основные группы - 1. памятники, оказавшиеся на подкотрольных Азербайджану территориях, 2. памятники расположенные в нейтральной зоне или близко к границе и не имеющие доступности, 3. памятники находящиеся близко к границе, но имеющие доступность. У всех трех групп памятников различны проблемы их сохранения и доступности. Но, учитывая вероятность пограничных изменений и военных столкновений, все памятники могут стать мишенью или оказатья в зоне возможных военных действий.

Таким образом, состояние памятников, которые играют важную роль для сохранения целостности культурного ландшафта приграничных поселений, вследствие азербайджанскй агрессии 2020-2022 годов изменилось и эти изменения для разных памятников выражаются по разному. Среди этих памятников Бхено Нораванк, княжеский дворец Хнацаха, Срнаехци, много хачкаров, монастырей, церквей, княжеских дворцов, поселений, курганов, могильников, пещерных и скальных комплексов, которые занимают важное место среди армянского культурного наследия.

* * *

Ներածություն: Արցախյան 44-օրյա պատերազմից և դրան հաջորդած սահմանային փոփոխություններից հետո խնդիրներ առաջացան նաև սահմանին մոտ գտնվող հուշարձանների պահպանության և մատչելիության հարցում: Այս խնդիրները առկա են ինչպես Հայաստանի Հանրապետության տարբեր սահմանային համայնքների հաշվեկշռում գտնվող, այնպես էլ չգրանցված հուշարձանների դեպքում: Մշակութային լանդշաֆտի և հուշարձանների կարգավիճակի փոփոխությունները տեսանելի են հատկապես Սյունիքի մարզում, որտեղ 2020 թվականից հետո տեղի են ունեցել հիմնական

սահմանային փոփոխությունները: Այս պատճառով սահմանային հուշարձանների խնդիրները քննարկելու համար ընտրել ենք Գորիսի տարածաշրջանը:

Անկախության շրջանում՝ Արցախյան ազատամարտից հետո, ՀՀ պետական սահմանի Սյունիքի մարզի հատվածում չկար անմիջական վտանգ և խնդիրներ կապված սահմանային հուշարձանների մատչելիության ու պահպանության հետ, քանի որ սահմանից այն կողմ սկսվում էր Արցախի Հանրապետությունը (ԼՂՀ) և ռազմականացված իրավիճակը գտնվում էր ամենաքիչը 50 կիլոմետր հեռավորության վրա: 44-օրյա պատերազմից և նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո ադրբեջանական ուժերը և, հետևաբար, ռազմականացված իրավիճակը հասավ ՀՀ պետական սահման (Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը): Արդյունքում 2021 թ. օգոստոսի վերջին դադարեցվեց նաև Գորիս-Կապան միջպետական ճանապարհի օգտագործումը, քանի որ ադրբեջանական կողմին անցավ 21 կիլոմետր ճանապարհահատված և Շուռնուխ գյուղի մի մասը (Ադրբեջանն այսօրվանից Գորիս - Կապան ճանապարհին մաքսակետեր կտեղադրի, հայկական կողմը համապատասխան քայլեր կձեռնարկի. Արմեն Գրիգորյան): Իրավիճակը շարունակվեց էլ ավելի բարդանալ 2022 թ. օգոստոսին, երբ դադարեցվեց Տեղ-Բերձոր (Լաչին) ավտոճանապարհի օգտագործումը և գործարկվեց Կոռնիձորով անցնող ճանապարհը: Նույն ժամանակահատվածում ադրբեջանական զինված ուժերը սահմանային տարբեր հատվածներում 100-300 մետր առաջ եկան (ԱԱԾ Հաղորդագրություն): 2022 թ. սեպտեմբերի 13-14-ի ադրբեջանական հարձակման արդյունքում սահմանի տարբեր հատվածներում եղան հակառակորդի կողմից առաջխաղացումներ: Իսկ 2023 թ. սեպտեմբերի 19-ին ադրբեջանական հարձակումից և Արցախի վերջնական հայաթափումից հետո իրավիճակը սահմանագծին էլ ավելի լարվեց: Արդյունքում բարդացան նաև սահմանին մոտ գտնվող հուշարձանների հասանելիության խնդիրները:

Հոդվածի նպատակն է հետազոտել սահմանային հուշարձանների պահպանության և մատչելիության խնդիրները, բնակավայրերի մշակութային լանդշաֆտի փոփոխությունները Արցախյան 44-օրյա պատերազմի և դրան հաջորդած սահմանային փոփոխություններից հետո ընկած ժամանակահատվածում: Խնդիր ունենք ուսումնասիրել և դասակարգել սահմանային տարբեր հուշարձանների կարգավիճակների փոփոխությունները: Թեման արդիական է հատկապես Արցախյան 44-օրյա պատերազմի և դրան հաջորդած սահմանային փոփոխություններից հետո, երբ այդ հուշարձանները կարող են թիրախավորվել կամ հայտնվել հնարավոր նոր ռազմական գործողությունների հատվածում:

Ընդհանուր առմամբ, ինչպես նաև Գորիսի տարածաշրջանի դեպքում, հուշարձանները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝

1) հակառակորդի վերահսկողության տակ անցած տարածքներում գտնվող հուշարձաններ

2) չեզոք գոտում և/կամ սահմանի վրա գտնվող և անհասանելիություն ունեցող հուշարձաններ

3) սահմանին մոտ գտնվող և հասանելիություն ունեցող հուշարձաններ։

Առաջին խմբի հուշարձանները

Առաջին դեպքում պետական սահմանի սահմանագծի փաստացի փոփոխությունների արդյունքում մի շարք հուշարձաններ, որոնք նախնական շրջանում գտնվում էին որևէ համայնքի հաշվեկշռում և մաս էին կազմում որևէ համայնքի մշակութային լանդշաֆտի, այժմ հայտնվել են հակառակորդի վերահսկողության շրջաններում։

Այս առումով ակնառու օրինակ է «Մեծ և Փոքր Սյունիքներ» կամ «Մայր Հայրենիք» կոչվող հուշակոթողը՝ Արցախի և Հայաստանի հանրապետությունների սահմանագլխին, որը 2023 թ. ապրիլին անցավ Ադրբեջանի վերահսկողության տակ՝ հայտնվելով ոչնչացման սպառնալիքի առաջ։ 2023 թ. մարտի վերջին Ադրբեջանի կողմից փակվեց դեպի Արցախ Բերձորով (Լաչին) ընթացող նախկին ճանապարհը և արդեն ապրիլի սկզբին գործարկվեց Կոռնիձոր գյուղով անցնող նոր ճանապարհը։ Արդյունքում Ադրբեջանի վերահսկողության տակ անցավ նաև «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշարձանը, որը կառուցվել է 2004 թ. (Սյունիքի և Արցախի սահմանագլխի «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթողն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ՝ հայտնվելով ոչնչացման սպառնալիքի առաջ)։ Հուշարձանի ճարտարապետը Սևադա Զաքարյանն է, կառուցվել է Սյունիքի նախկին մարզպետ Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենների խորհրդի նախագահ Մաքսիմ Հակոբյանի ֆինանսավորմամբ։ 2007 թ. հուշարձանի տարածքում կանգնեցվել է նաև խաչքար։ Սուղ ժամկետներում հուշահամալիրի տեղափոխության անհնարինությունը հաշվի առնելով՝ հայկական կողմը 2023 թ. ապրիլի 3-ին տեղափոխեց միայն խաչքարը, և սա կարելի համարել եզակի բացառություն, երբ հուշարձանը հանվում է իր պատմական լանդշաֆտից, կտրվում իր ամբողջականությունից՝ հանուն փրկության։



Նկ. 1 «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշարձանը։

Ինչպես և ենթադրվում էր, Գուգլի արբանյակային քարտեզի 2024 թ. ապրիլ ամսի թարմացումով արդեն երևում է, որ հուշարձանը հավասարեցվել է հողին (Ոչնչացվել է Ադրբեջանի վերահսկողության տակ անցած «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթողը; Նկ. 1)։

Եվս մեկ օրինակ է Քարահունջ գյուղը, որի հուշարձանների ցանկում գրանցված շուրջ 58 հուշարձանից ավելի քան 10-ը անցել են ադրբեջանական վերահսկողության տակ։ Գորիս-Կապան միջպետական ճանապարհի 21 կիլոմետր հատվածի և Շուռնուխ գյուղի մի մասի Ադրբեջանին անցնելուց հետո, բանուկ ճանապարհի վրա գտնվող Քարահունջ գյուղը կորցրեց իր նախկին նշանակությունը։ Իսկ գյուղի հաշվեկշռում գրանցված և 5-6 կիլոմետր հարավ գտնվող հուշարձանների մի մասը, որոնք գտնվում են Գորիս-Կապան հին ճանապարհի մոտ՝ հին ամառանոցային հատվածում, դարձան դժվարամատչելի, կամ անհասանելի։ Եթե 2020 թ. պատերազմից անմիջապես հետո Հառանի ձոր, Սուրիկի լիճ, Սիրիջի բերդ տեղամասերում հաշվառված հուշարձանները ունեին հասանելիություն, ապա սահմանային իրավիճակի լարմանը զուգահեռ խնդիրները սրվեցին նաև հուշարձանների հասանելիության և հետևաբար պահպանության տեսանկյունից, իսկ դրանց մի մասի ներկայիս կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ չկան։

Երկրորդ խմբի հուշարձանները

Հուշարձանների մյուս խումբը չեզոք գոտում և/կամ փաստացի սահմանի վրա կամ մոտ գտնվող, հասանելիություն չունեցող հուշարձաններն են։ Սահմանային լարվածությամբ պայմանավորված՝ այս խմբի հուշարձանների մատչելիությունը պարբերաբար փոփոխվում է։ Այս շարքում գտնվող մի շարք հուշարձաններ, որոնք որոշակի հասանելիություն ունեին մինչև 2023 թ. սեպտեմբերյան դեպքերը, այժմ անհասանելի են։ Հուշարձանների հիմնական մասին մոտեցող ճանապարհներին ու արահետներին տեղադրված են «պետական սահմանին», «ականապատ գոտիներին», «դիտարկվող հատվածներին» մոտենալը կանխող, նախազգուշացնող ցուցանակներ։

Տեղ գյուղի հիմնական հուշարձան-ուխտավայրերից Սոնեղցին և Կոտրած եղցին 2022 թ. ադրբեջանական առաջխաղացման պատճառով հայտնվել են հակառակորդի ուղիղ տեսանելիության ներքո, ինչի արդյունքում երկու հուշարձաններն էլ, լինելով հայկական կողմի վերահսկողության տակ, դժվար հասանելի են կամ անհասանելի այցելուների համար։

Սոնեղցի անունը ստուգաբանվում է որպես բլրի գագաթին գտնվող եկեղեցի (Նկ. 2), սարալանջին գտնվող եկեղեցի. սեռ՝ բլրի գագաթ, եղցի՝ եկեղեցի [Տեր-Մինասյան 1986, 60; Խուրշուդեան 2022, 399]։ Կառույցը V-VI դարերի միանավ թաղածածկ սրահ է՝ 7.77 x 5.41 մետր արտաքին չափերով [Հասրաթյան 1985, 244]։ Եկեղեցին կանգնեցված է երկաստիճան գետնախարսխի վրա։ Արևելյան կողմում ունի շեշտված պայտաձև հատակագծով խորան՝ ներառված արտաքին պատերի ուղղանկյուն ծավալի մեջ։ Պայտաձև է նաև խորանի կամարը։

Նկ. 2 Սոնեղցի եկեղեցին, լուս.՝ Monumentwatch խմբի։

Եկեղեցին կառուցված է տեղական սպիտակ բազալտատիպ սրբատաշ խոշոր քարերից, պատերի հաստությունը 1 մետր է: Կառույցի ներքին տարածությունը 3.36 x 3.55 մետր է [Տեր-Մինասյան 1986, 60]: Եկեղեցու մուտքն արևմտյան կողմից է (բացվածքի լայնությունը 1.15 մետր է), ունի երկու պատուհան արևմտյան և արևելյան կողմերում: Բեմն աղոթասրահից բարձր է 0.5 մետրով, բեմառէջքն ակնհայտորեն բարձրացվել է հետագայում: Խորանն ունի գմբեթարդի տակով ընթացող գոտի, որը շարունակվում է հյուսիսային և հարավային պատերի ողջ երկայնքով: Ներսի կողմից մուտքի բարավորի վերին հատվածում առկա է 0.7 մետր խորություն ունեցող պայտաձև բեռնաթափման խորշ [Տեր-Մինասյան 1986, 60]: Կառույցը լավ պահպանված է, թափված են միայն տանիքի ծածկասալերը: Եկեղեցու դիմաց՝ արևմտյան կողմում, կան տապանաքարեր, իսկ պատերի վրա առկա են զարգացած միջնադարին վերաբերող խաչապատկերներ (Սոնեղցի եկեղեցին):

Բացի հուշարձանի պատմական, ճարտարապետական կարևորությունն ու հետազոտական աշխատանքների անհնարինությունը՝ Սոնեղցին, նույն կարգավիճակում գտնվող Կոտրաճ եղցու հետ միասին, նաև կարևոր և հիմնական ուխտատեղիներից է Տեղի և շրջակա գյուղերի բնակիչների համար: Եթե սկզբնական շրջանում հնարավոր էր համայնքային իշխանությունների թույլտվությամբ և ուղեկցությամբ սահմանափակ ժամանակով մոտենալ հուշարձաններին, ապա սահմանային իրավիճակի լարման ընթացքում հուշարձանները դառնում են անհասանելի:

Նկ. 3 Կոռնիձոր գյուղի «Շուռնուխի խաչեր» կոչվող հուշարձանը, լուս.՝ Monumentwatch խմբի:

Երկրորդ խմբին պատկանող հուշարձանի օրինակ է Կոռնիձոր գյուղի «Շուռնուխի խաչեր» կոչվող ամբողջությամբ ավերված գյուղատեղիի տարածքում գտնվող դամբարանաբլուրը (Նկ. 3)։ Հուշարձանը գտնվում է գյուղից 2.2 կմ հարավ-արևմուտք՝ երեք կողմերից գետակով շրջապատված փոքր հրվանդանի վրա։ Այն իրենից ներկայացնում է դամբարանաբլուր, որի վրա հավաքել են տարբեր տարիներին հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերված վեց կոթողներ և խաչքարեր։ Ամենավաղ թվագրվողը, որն հավանաբար ժամանակակից է դամբարանաբլուրին, մարդակերպ կոթողն է։ Մյուսը ուղղանկյուն մի սյուն է, որի սրբատաշ նիստերից մեկի վրա պատկերված է շրջանի մեջ առնված վարդյակ։ Հաջորդ չորս կոթողները խաչքարեր են, որոնցից միայն մեկն է մարդակերպ կուռքի և դամբարանաբլուրի հետ միասին գրանցված Կոռնիձորի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում։ Խաչքարը կոպտատաշ սալաքար է՝ վրան ետնախորքը հեռացնելու տեխնիկայով քանդակված երկու կենտրոնական խաչերով։ Միաբլթակ վերջավորություններով խաչերի ստորին հատվածներից բարձրանում են ոճավորված արմավատերևներ։ Իսկ խաչերի վերին հատվածներից դեպի խաչակենտրոն են իջնում խաղողի ողկույզներ։ Խաչքարի հորինվածքի վերին հատվածը խիստ հողմահարված է։ Չի երևում, թե ոչ ամբողջությամբ երևացող զարդամոտիվները ինչ են պատկերում, կամ արդյոք դրանք խաչքարի՞նն են, թե՞ սալաքարը վերօգտագործված է։ Հորինվածքային լուծումները հաշվի առնելով՝ խաչքարը թվագրվում է X-XI դարերով [Պետրոսյան 2008, 99-110]։ Մյուս խաչքարը, որը հավանաբար ժամանակագրորեն համապատասխանում է նախորդին, ունի անհավասար համամասնություններ։ Կենտրոնական խաչը հավասարաթև է՝ եռաբլթակ վերջավորություններով, որից ներքև պատկերված են երկու, ավելի փոքր չափերի և միաբլթակ վերջավորություններով խաչեր։ Խաչապատկերները այս դեպքում նույնպես ստացել են ետնախորքը հեռացնելու տեխնիկայով։ Մյուս երկու խաչքարերը ունեն հորինվածքային պարզ լուծումներ և, ընդհանուր առմամբ, հավաքված կոթողների խաչքարերը կարելի է թվագրել IX-XI դարերով։

Սահմանից ընդամենը 200-300 մետր հեռավորությամբ դամբարանաբլուրին և դրա վրա հավաքված կոթողներին հասնելու համար պետք է անցնել «պետական սահման մուտքն ու ելքն արգելող» 3 ցուցանակ (Նկ. 4)։ Այնուամենայնիվ երկրորդ խմբի հուշարձանների հիմնական մասի շրջակայքում առկա վարելահողերի, դաշտերի ու արոտավայրերի հիմնական մասը շարունակվում է մշակվել և օգտագործվել բնակիչների կողմից։ Նրանց մուտքն ու ելքը սահմանամերձ հատվածներ իրականացվում է սահմանապահների իմացությամբ, իսկ լարված իրավիճակներում, հաշվի առնելով անվտանգությունը, արգելվում է։

Նկ. 4 «Պետական սահման մուտքն ու ելքն արգելող» ցուցանակ Կոռնիձորից, լուս.՝ Monumentwatch խմբի։

Երրորդ խմբի հուշարձանները

Վերջին խմբի հուշարձանները հիմնականում գտնվում են իրենց նախնական կարգավիճակում, բայց հաշվի առնելով Արցախյան 44-օրյա պատերազմը և դրան հաջորդած ռազմական տարբեր գործողությունները՝ այդ հուշարձանները ամեն պահի կարող են թիրախավորվել կամ հայտնվել հնարավոր նոր ռազմական գործողությունների հատվածում։

Օրինակ՝ 2022 թ. սեպտեմբերի երկօրյա պատերազմի ժամանակ թիրախավորվեցին Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի մարզի բազմաթիվ տարածքներ (ՀՀ պաշտպանության նախարարության հայտարարությունը)։ Գորիսի տարածաշրջանում ականներից վնասվեցին Ակներ գյուղում 1 տուն, Վերիշենում՝ 4 տուն և 1 անասնաշենք, Տեղ համայնքի Քարաշեն գյուղի հանդիսությունների սրահը… (Պետրոսյան Սառա, 2022-ի երկօրյա պատերազմի հետևանքով համայնքներին ու բնակիչներին պատճառված վնասներն ու կորուստները)։ Եթե քարտեզի վրա տեղադրենք վերոնշյալ քաղաքացիական շինությունները, ապա կտեսնենք, որ ականները պայթել են Գորիսի տարածաշրջանի ոչ միայն սահմանամերձ, այլ նաև ամենախորը հատվածներում (Նկ. 5)։ Իսկ նշված բոլոր դեպքերում կառույցների հարևանությամբ և/կամ մի քանի 100 մետր հեռավորության վրա առկա են հանրապետական և տեղական նշանակության բազմաթիվ հուշարձաններ։



Նկ. 5 Գորիսի տարածաշրջանի հուշարձաններն ու 2022 թ. ականների պայթյունները ներկայացնող քարտեզ։

Այս խմբի հուշարձանի օրինակ է Գորիս քաղաքից 4 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Ակներ (Բռուն) գյուղի Խաչեր սրբատեղին, որը հայտնի է նաև Խաչին օս, Ակնին ճիրին խաչ, Սըփ Կակօփի խաչ անուններով։ Ե. Լալայանը նկարագրում է սառնորակ աղբյուրների մոտ գտնվող քերծերում առկա սրբատեղին և նշում, որ «թէպէտ ո՛չ մի խաչ, ո՛չ մի պատկեր չկայ, բայց և այնպէս՝ ձէթի հին կանթեղներ են վայր ածած մեծ թւով, և ամբողջ քարատակը սևացած է վառուած ձէթի ճրագների և մոմերի ծուխից»։ Հեղինակը նաև նշում է, որ ուխտատեղի «այժմս էլ Գորիսից շատ ուխտաւորներ են գալիս» [Լալայեան 1899, 31]։ Զանգեզուրի հայերը աշխատությունում Ս. Լիսիցյանը նշում է, որ նախնական սովորությունների համաձայն՝ Վարդավառի տոնը նվիրված է լեռների պաշտամունքին և հենց այդ օրն են եղել ուխտագնացությունները դեպի սրբացված լեռներ [Լիսիցյան 1969, 278]։ Այս համատեքստում հեղինակը ներկայացնում է նաև դեպի Մեծ Իշխանասար (Սըփ Օհանէսի) իրականացվող ուխտագնացությունը, ինչն այժմ անհնար է, քանի որ լեռան գագաթը վերահսկվում է ադրբեջանական ուժերի կողմից։ Որպես ուխտագնացության ավարտ՝ երեկոյան վերադարձի ճանապարհին ուխտավորները այցելել են նաև Խաչեր սրբատեղի, որը Լիսիցյանն անվանում է Սըփ Կակօփի (Սուրբ Հակոբի) խաչ։ Նկարագրելով սրբատեղիում քարատակի մեկ մուտքով մտնելու և մյուսից դուրս գալու ծեսը՝ հետազոտողը ներկայացնում է որպես չար ոգիների սպառնացող վտանգներից ազատվելու միջոց և նշում, որ այս ծեսը կատարվել է բոլոր խաչայցելություններին [Լիսիցյան 1969, 280]։ Սրբատեղին գտնվում է Իշխանասարի ստորոտի հատվածի ժայռոտ բլուրներից մեկի վրա՝ Վարարակն գետի ակունքների շրջակայքում։ Համալիրի հիմնական հատվածը մի երկարավուն քարատակ է, որի մեկ

մուտքով ուխտավորները ներս են մտել, իսկ երկրորդով՝ դուրս եկել: Բացի հիմնական քարատակը, կան նաև այլ սրբացված խորշեր, իսկ համալիրի վերին հարթակի վրա տեղադրված են մի քանի նոր խաչքարեր, տաղավարներ, մատաղի ծեսի իրականացման հարմարություններ: Բլրի վերին հատվածից դեպի հիմնական սրբատեղի իջնելու համար տեղադրվել են աստիճաններ: Նոր խաչքարեր և տաղավար է կառուցվել նաև բլրի ստորոտում՝ Վարարակն գետակի ափին (Ակներ գյուղի «Խաչեր» սրբատեղին):

Եզրակացություններ:

Սահմանային հուշարձանները ունեն տարբեր (տեղական, հանրապետական) նշանակություն[1]: Դրանց մեծ մասն ունի հետազոտության կարիք: Այս հուշարձանների շարքում են հայաստանյան մշակութային ժառանգության մեջ կարևոր տեղ զբաղեցնող Բղենո Նորավանքը, Սոնեղցին, Խնածախի մելիքական ապարանքը, բազմաթիվ խաչքարեր, վանքեր, եկեղեցիներ, մելիքական ապարանքներ, ժայռափոր համալիրներ, դամբարանադաշտեր, բնակատեղիներ, գերեզմանատներ, կոթողներ և այլն:

Այսպիսով, սահմանային բնակավայրերի մշակութային լանդշաֆտի ամբողջացման մեջ կարևոր դեր ունեցող հուշարձանների վիճակը 2020-2022 թթ. ադրբեջանական ագրեսիայից հետո ենթարկվել է փոփոխության, և այդ փոփոխությունը տարբեր հուշարձանների դեպքում արտահայտվել է տարբեր կերպ, որոնք մենք դասակարգել ենք երեք խմբում:

Այս հուշարձանների առաջին խումբը հայտնվել է անմիջապես ադրբեջանական ուժերի վերահսկողության տակ: Արդյունքում հուշարձանները ոչ միայն դարձել են անմատչելի, այլև չկան դրանց վերաբերյալ տեղեկություններ: Այս խմբի հուշարձանները նաև գտնվում են անմիջական վտանգի տակ, ինչպես օրինակ ոչնչացվեց «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթողը: Ինչպես այս դեպքը, այնպես էլ Արցախի մշակութային ժառանգության ներկայիս իրավիճակի քննությունը ցույց է տալիս, որ հայկական տարածքների ադրբեջանական վերահսկողության տակ անցնելու դեպքում ամենախոցելի խումբը դառնում է անկախության տարիներին ստեղծված ժառանգությունը՝ հուշարձանները, կոթողները, արձանները: Նման օրինակները ներկայումս բազմաթիվ են Արցախի Հանրապետության տարածքում (MonumentWatch նախաձեռնության ահազանգերը): Հետևաբար սահմանին գտնվող հուշարձանների համար ոչնչացման վտանգը մեծ է այնքանով, որ եթե լինի էսկալացիա և տարածքների տեղաշարժ կրկին, այդ

[1] Հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության: Հանրապետական նշանակության կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների բարձրարժեք, հնագույն, տիպական կամ հազվագյուտ նմուշները: Տեղական նշանակության կարգին են դասվում հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները բնութագրող հուշարձանները (Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենք, հոդված 6):

հուշարձանների պաշտպանությունը դառնում է գրեթե անհնար՝ անկախ հուշարձանը կրում է որևէ միջազգային կազմակերպության էմբլեմա, թե ոչ:

Առանձնացված երկրորդ խմբի մեջ են մտնում չեզոք գոտում և/կամ սահմանի վրա կամ մոտ գտնվող, հասանելիություն չունեցող հուշարձանները: Սահմանային լարվածությամբ պայմանավորված՝ այս խմբի հուշարձանների մատչելիությունը պարբերաբար փոփոխվում է: Ե՛վ առաջին, և՛ երկրորդ խմբի հուշարձանների պաշտպանության հարցը ոչ միայն տեղական, այլև միջազգային կազմակերպությունների հրատապ խնդիրներից մեկը պետք է լինի: Թեև Եվրամիության հանձնաժողովներ հավաքում և ցուցակագրում են «անհասանելի» հուշարձանների անունները, սակայն պաշտպանության հստակ մեխանիզմներ չեն գործարկվում: Այստեղ խնդիր է նաև քննարկել արդյոք պատերազմական բախման ժամանակ գոյություն ունեն ժառանգության պաշտպանության հստակ մեխանիզմներ: Նույնիսկ վերջին տարիներին աշխարհի տարբեր հատվածներում տեղի ունեցող պատերազմների և բախումների ընթացքը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, հուշարձանները թիրախավորվում են, ռմբակոծվում են և ոչ մի միջազգային կառույցի էմբլեմա չի կարողանում հուշարձանը պաշտպանել հրթիռից:

Հաշվի առնելով միջազգային փորձն ու Արցախի օրինակը (MonumentWatch նախաձեռնության ահազանգերը)՝ կարծում ենք, որ սահմանային հուշարձանների պաշտպանության տեսանկյունից ամրակայումներն ու վերականգնումները երկրորդական աշխատանքներ են: Նախևառաջ համատեղ ուժերով պետք է իրականացվեն հուշարձանների թվայնացման, մանրամասն հետազոտման և տվյալների բազայի ստեղծման հիմնավոր աշխատանքներ:

Վերջին խմբի հուշարձանները հիմնականում գտնվում են իրենց նախնական կարգավիճակում, բայց հաշվի առնելով Արցախյան 44-օրյա պատերազմը և դրան հաջորդած ռազմական տարբեր գործողությունները՝ այդ հուշարձանները ամեն պահ կարող են թիրախավորվել կամ հայտնվել հնարավոր նոր ռազմական գործողությունների հատվածում:

Արդյունքում փոփոխության են ենթարկվել Գորիսի տարածաշրջանի բոլոր հուշարձանների կարգավիճակները՝ անկախ փաստացի սահմանից ունեցած հեռավորությունից: «Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով» ծրագրի շրջանակներում հետազոտվել են Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի օրինակները, իսկ MonumentWatch նախաձեռնության խմբի կողմից հետազոտվում են հենց սահմանային հուշարձանները:

Գրականության ցանկ

Լալայեան Ե. 1899, Զանգեզուրի գաւառ, հ. Բ, տպարան Կ. Մարտիրոսեանցի Թիֆլիս, 116 էջ:

Լիսիցյան Ս. 1969, Զագեզուրի հայերը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 465 էջ:

Խուրշուդեան Ս. 2022, Տեղ գիւղի պատմական յուշարձանները եւ նորայայտ վիմագրերը, Սիոն, թիւ 8-12, Երուսաղէմ, էջ 397-413:

Հասրայան Մ. 1985, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 278 էջ:

Պետրոսյան Հ. 2008, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Փրինթինֆո, Երևան, 406 էջ:

Տեր-Մինասյան Ա. 1986, Պատմական Սյունիքի վաղ միջնադարյան միանավ հուշարձանները, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1/1, Երևան, էջ 58-65:

Համացանցային հղումներ

ԱԱԾ Հաղորդագրություն, ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն, 30.03.2023, https://www.sns.am/hy/news/view/830:

Ակներ գյուղի «Խաչեր» սրբատեղին, MonumentWatch նախաձեռնություն, 18.04.2024, https://monumentwatch.org/hy/monitoring_watch/%d5%a1%d5%af%d5%b6%d5%a5%d6%80-%d5%a3%d5%b5%d5%b8%d6%82%d5%b2%d5%ab-%d5%ad%d5%a1%d5%b9%d5%a5%d6%80-%d5%bd%d6%80%d5%a2%d5%a1%d5%bf%d5%a5%d5%b2%d5%ab%d5%b6/:

Ադրբեջանն այսօրվանից Գորիս - Կապան ճանապարհին մաքսակետեր կտեղադրի, հայկական կողմը համապատասխան քայլեր կձեռնարկի. Արմեն Գրիգորյան, Ազատություն ռադիոկայան, 21.11.2021, https://www.azatutyun.am/a/31555339.html:

Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետ, 10.11.2020, https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/:

ՀՀ պաշտպանության նախարարության հայտարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության կայքէջ, 14.09.2024, https://www.mil.am/hy/news/11024:

Ոչնչացվել է Ադրբեջանի վերահսկողության տակ անցած «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթողը, MonumentWatch նախաձեռնություն, 31.07.2024, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%b8%d5%b9%d5%b6%d5%b9%d5%a1%d6%81%d5%be%d5%a5%d5%ac-%d5%a7-

%d5%a1%d5%a4%d6%80%d5%a2%d5%a5%d5%bb%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%be%d5%a5%d6%80%d5%a1%d5%b0%d5%bd%d5%af%d5%b8%d5%b2%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5/?fbclid=IwY2xjawEW_AZleHRuA2FlbQIxMQABHWE7CUNFetnxorI1vWN1W9aXGHhotGry8GqstT75Aneojchf76S0GxmWVg_aem_DmRJ_ODN4Euj8F1RTGzltg:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենք, հոդված 6, 11.11.1998, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=38019:

Պողոսյան Ս., 2022-ի երկօրյա պատերազմի հետևանքով համայնքներին ու բնակիչներին պատճառված վնասներն ու կորուստները, 20.01.2023, https://hetq.am/hy/article/152294:

Սյունիքի և Արցախի սահմանագլխի «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթողն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ՝ հայտնվելով ոչնչացման սպառնալիքի առաջ, MonumentWatch նախաձեռնություն, 18.04.2024, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%bd%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%ab%d6%84%d5%ab-%d6%87-%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab-%d5%bd%d5%a1%d5%b0%d5%b4%d5%a1%d5%b6%d5%a1%d5%a3%d5%ac%d5%ad%d5%ab-%d5%b4%d5%a5%d5%ae-%d6%87-%d6%83/:

Սոնեղցի եկեղեցին, MonumentWatch նախաձեռնություն, 18.04.2024, https://monumentwatch.org/hy/monitoring_watch/%d5%bd%d5%bc%d5%b6%d5%a5%d5%b2%d6%81%d5%ab-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%ab%d5%b6/:

MonumentWatch նախաձեռնության ահազանգերը, 30.06.2024, https://monumentwatch.org/hy/alerts/: